ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՒ ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

(Շ–ր––ն–կ· Ա–ր–ր––տ 1881 Մ–յ–ս·)

1· Առարկայական եւ դասարանական ուսումնառութեան դրութիւնների (սիստեմ) որոշումը։ — Դասարանական ուսումնառութեան դրութեան որոշումը։ — 2· Դասարանական ուսումնառութեան դրութեան առաւելութիւնները եւ պակասութիւնները համեմատելով առարկայական դրութեան հետ։ — 3· Դասարանական դրութիւնը՝ մի վարժապետ ունեցող տարրական դպրոցում։ — Մի ուսուցչի զանազան առարկաներ աւանդելն ու դասարանական դաստիարակներ նշանակելն իբրեւ մի միջոց դասարանական դրութեան ուսումնառութեան յարմարութեանց մասամբ հասնելու, եւ նորա պակասութիւններից խուսափելու.

1· Առարկայական դրութեամբ ուսումնառութիւնն ասւում է այն դրութիւնը որ ամէնայն ուսանելի առարկայ աւանդւում է առանձին ուսուցիչ, օրինակ, աշխարհագրութիւնն աւանդում է մի ուսուցիչ, թւաբանութիւնն ուրիշը, Ռուսերէնը մի երրորդը ևն.

Իսկ դասարանական դրութեամբ ուսումնառութիւնն ասւում է այն, որ դպրոցում աւանդելի առարկաները բոլորն էլ մի ուսուցիչ է աւանդում. որով նա իր աշակերտներին փոխադրում է դասարանից դասարան մինչև ուսումնարանի դասընթացի աւարտումը, կամ ամէն տարի յանձնում է նոցա մի ուրիշ վարժապետի, իսկ ինքը նորերին է ընդունում.

Դասարանական ուսումնառութեան դրութեան փոփոխութիւնը բարձր կամ մինչև իսկ միջնակարգ ուսումնարանների համար՝ մտածել անգամ չէ կարելի, որովհետև դժուար է գտնել այնպիսի մի ուսուցիչ, որ բաւականաչափ պատրաստ լինէր աւանդել բոլոր ուսանելի առարկաները այդ դասարաններում. Դասարանական դրութիւնը կարելի է խստապէս մտցնել միայն տարրական ուսումնառութեան ժամանակ, այսինքն ստորին ուսումնարաններում և միջնակարգ ուսումնարանների ներքին դասարաններում.

2· Դասարանական դրութիւնը տարրական ուսումնառութեան ժամանակ առարկաների հետ համեմատելով ունի առաւելութիւններ և մի քանի պակասութիւններ.

Տեսնենք այդ առաւելութիւնները համեմատելով առարկայական դրութեան պակասութիւնների հետ.

Դասարանական ուսուցիչը սովորեցնելով բոլոր առարկաները, աւելի շուտով կարող է իմանալ իր աշակերտների կարողութիւնը, նոցա անձնական յատկութիւնները, հետևաբար և շուտով կարող է համաձայնեցնել աշակերտների ուսումնառութիւնը նոցա հոգեկան կարողութիւնների և առանձնութիւնների հետ քան թէ առարկայական ուսուցիչը.

Ճանաչելով իւր աշակերտներին և բոլոր ուսման ժամանակ նոցա հետ գտնուելով, դասարանական ուսուցիչը կարող է ունենալ նոցա վերայ շատ մեծ կրթողական ազդեցութիւն քան թէ առարկայական ուսուցիչը, որը դասարանում շաբաթը մի քանի ժամ է միայն մնում։

Դասարանական ուսուցիչը ուսմունքը յառաջ տանելով՝ կարող է մի կողմից այնպէս դասակարգել ուսանելի առարկաները, որ նոքա օգնեն միմեանց. իսկ միւս կողմից կարող է այնպէս բաժանել ամենօրեայ դասերը և դասարանից դուրս լինելիք աշխատութիւնները, որ աշակերտները պարապմունքներով բեռնաւորուած չեն լինի։ Առհասարակ դասարանական դրութեամբ մեր դասաւանդութեան ժամանակը կարող է լինել առաւել միութիւն, ներդաշնակութիւն և հաւասարաչափութիւն քանթէ առարկայական դասաւանդութեան ժամանակ։

Բայց դասարանական դրութիւնը իւր առաւելութիւններով հանդերձ կարող է ունենալ և անյարմարութիւններ, որոնց հեռացնելու համար հարկաւոր է գործնականութեան վերայ հոգալ։

Երբ որ դասարանական ուսուցիչը հիւանդանում է, աշակերտների պարապմունքները դադարում են։ Աշակերտները մնում են առանց ուսուցչի և ստիպվում են կամ ցրուել և կամ անգործ նստել։ Այս չէր կարող պատահել ամենայն առարկայի առանձին ուսուցիչ եղած ժամանակ. որովհետև եթէ թուաբանութեան ուսուցիչը հիւանդ է, բայց գալիս են պարապելու ռուսերէնի, հայրենագիտութեան, սղագրութեան (արագագրութեան) և միւս առարկաների ուսուցիչները, դասատուութիւնը չէ դադարում։ Բացի սորանից մնացեալ առողջ ուսուցիչները կարող են միմեանց վերայ բաժանել իւրեանց հիւանդ ընկերի դասերը։ Վերջապէս անհամեմատ դիւրին է փոփոխել դասերը մի առարկայից, քան թէ բոլորից։

Երբ դասարանական ուսուցիչն անփոյթ և վատ է պատրաստուած իւր գործին՝ դասարանի բոլոր առարկաները յառաջ չեն գնում, և աշակերտների զարգացումը յետ է ընկնում։ Իսկ առարկայական դրութեան ժամանակ աշակերտները՝ դանդաղ յառաջ գնալով մի վատ ուսուցչի առարկայից, կարող են յաջողութեամբ յառաջ գնալ միւս ուսուցիչների առարկաներից, և այսպէսով նոցա զարգացումը շատ չէ դանդաղանում, նոքա կանգ չեն առնում մի տեղում։ Բացի սորանից թոյլ կամ անփոյթ ուսուցիչը խիստ քիչ անգամ որոշվում է միւս ուսուցիչներից, որ ստիպում է նորան աւելի շուտով ուշադրութիւն դարձնել իւր վրայ։

Դասարանական դրութեամբ դասաւանդութեան ժամանակ ուսուցչի գործունէութիւնն աւելի ցրուած է լինում քան թէ առարկայական դրութեան ժամանակ։ Դասարանական ուսուցիչը ստիպուած է հաւասարապէս հետաքրքրել աւանդելի բոլոր առարկաներին. իսկ առարկայական ուսուցիչը կարողէ առհասարակ կենդրոնացնել իւր գործունէութիւնը միայն իւր աւանդելի առարկաների վերայ. իսկ կենդրոնացումը յաջողութեան գլխաւոր պայմանն է։

Դասարանական դրութեան ժամանակն աշակերտները միշտ միևնոյն ուսուցչի հետ պարապելով, զրկվումեն այն զուարթացնող փոփոխութիւններից, որը պատահումէ երբ սովորեցնումեն մի քանի ուսուցիչներ, Իւրաքանչիւր ուսուցիչ մնանումէ դասարան իբրև անհատ բերելով իւր հետ մի նոր զուարթութիւն։

3. Այն ուսումնարաններում ուր միայն մի ուսուցիչ է հարկաւոր լինում զ. տարրական ուսումնարաններից շատերում, ինչպէս կարելի է գործադրել միմիայն դասարանական դրութեամբ դասաւանդութիւնը։

Գալով միջնակարգ ուսումնարաններին՝ պէտք է ասել որ՝ մի քանիսում դասարանական դրութիւնը բաւականին յարմարութեան են հասցնում, միևնոյն ժամանակ որչափ կարելի է հեռացնումեն նորա անյարմարութիւնները համանման առարկաները մի ուսուցչի յանձնելով, զ. աշխարհագրութիւն և պատմութիւն (հայրենիքի և ուրիշ աշխարհների), մին կամ նոր լեզուները. նոյնպէս ուսուցիչներից ամեն դասարանին առանձին դասախարակ նշանակելով, որոնք ամենից շատ դասեր ունին նոյն դասարանում։ Դասարանի դասախարակն աշխատումէ սովորեցնել իւրեան յանձնուած աշակերտներին, հսկել նոցա բարոյական և մտաւոր զարգացման վերայ. ուշադրութիւն է դարձնում ինչպէս տնական՝ այնպէս էլ դպրոցական պարապմունքների վերայ ևն. և այսպիսով գործումէ յօգուտ աշակերտների այն՝ ինչ որ կարող է անել դասարանական ուսուցիչը դասարանական դրութեամբ։

(Թարգմանեց՝ Ն.)

Գէորգ. Ճէմ. Ա. Լաբրանի Ուսանող

ՍՏԵՓԱՆՈՍ ԿԱՆԱՑԵԱՆՑ.

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՁՕՐԱՎԱՐԱՑ

ՁՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ.

(Շարունակ. դէս Ար. 1881 մայիս.)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՌԱՋԻՆԵՔ, ՀԱՄԱՁԱՍՊԵԱՆ, ԱՐՏԱԿ ԵՒ ՏԱՃԱՏ.

ՎԱՐԴԱՆ.

Հրամայեցէք պատուական նիզակակիցք իմ, ձեզ ենք սպասում, որպէս զի միասին վճռենք յառաջ խաղալ. Պարսից բանակը Միհրներսէհի և Մուշկան Դիւալաուրի առաջնորդութեամբ արշաւումէ Հայաստանն